

SUSU

Այսօր տատիս յիշեցի: Աչքերիս առջեւ եկաւ Թիֆլիսահայի իր հագ ու կապով, իրեն յատուկ նայուածքով, բարի ժպիտով: Բոլորը նրան Հոլոյ մամ էին ասում, հարս ու աղջիկ, տղա ու թոռ - Հոլոյ մամ: Զգիտեմ, դուք տեսե՞լ էք ութսունութ ամեայ գեղեցկուհի: Հոլոյ մամն էր: Կապոյտ աչքեր, մետաքս մաշկ: Մի օր կիսաքաց դռան ետեւից տատիս տեսայ լողանալու: Կեանքի լաւ ու վատը շատ եմ տեսել, բայց երբէք չեմ հանդիպել այդպիսի փարթամ կանացիութեան, մարմար մարմնի: Կեանքի ութսունութ տարիները չէին կարողացել մի անելորդ ծախ անկացնել նրա վարդազոյն մարմնին: Լինում էին ժամանակի կողմից խնայուածներ - Հոլոյ մամն էր:

Ամուսնուց՝ վարպետ Պողոսից մնացել էր շէնդ առանձնատունը եւ Նիֆոլայ ցարի շրջանի ոսկեղրամներ: Տասն այդ ոսկեղները առիթներով ծախսում էր: Բայց Հոլոյ մամի ոսկեղները միշտ հարսներու ու թոռների խօսակցութեան թեման էին:

- Հոլոյ մամ, էն Նիֆոլայի ոսկեղներից տուր մի քիչ ծախսեմք:

- Դեռ եղ ոսկեղներից շատ ունե՞ս, Հոլոյ մամ:

- Ել չկայ, չկայ, աղբիւրը ցամաքել ա,- պատասխանում էր Հոլոյ մամը՝ իրեն յատուկ հումորով:

Բայց դէ բոլորն էլ գիտէին, որ Հոլոյ մամի «հոգին խորն» է:

Մի օր տատս ինձ կանչեց ու լուրջ յանձնարարութիւն տուեց. Պողոս ջան, ա՛ն էս տասը ուրիշն եւ տար նոր երեք կոպեկանոցների հետ փոխի, ինձի շատ պէտք են:

Իր նարպիկ ու աչքաքաց թռուս համար դա որեւէ դժուարութիւն չէր ներկայացնում: Մի քանի րոպէից վերադարձայ յանձնարարութիւնը կատարած հետախոյզի հպարտութեամբ. տատիս փեշը լցուեց դեղին, փայլուն երեքկոպեկանոցներով...

Հարսանիք էր: Ուրախ էին բոլորը: Հոլոյ մամը հարբել էր մի քիչ: Տղա ու թոռ խնդրեցին, որ պարի: Ու պարե՛ց: Ես այդպիսի նագանգ դեռ չեմ տեսել: Հոլոյ մամը պարում էր, նկոււմ էր ու ձգոււմ, նա իր պարով տիրում էր շրջապատը: Իր իշխող նայուածքով արձանացրել էր բոլորին: Հոլոյ մամը պարում էր...

Հարսանեկան խնջոյքի ժամանակ նորից յիշեցին Նիֆոլայի ոսկեղները:

- Հոլոյ մամ, էն ոսկեղներն ափսոս եմ, տու՛ր մի քիչ ծախսեմք:

- Կը մեռնես, էն ոսկեղների տեղը մէկը չի իմանայ, Հոլոյ մամ, գոնէ տեղն ասա,- կատակում էին տղա ու թոռ:

- Առէ՛ք, ծախսէ՛ք, էսօրուանից լաւ օր չկայ: Առէ՛ք, ես պրծնեմ ձեզանից,- Հոլոյ մամը ձեռքը տարաւ հագուստի գրպանները:

Յանկարծ Նիֆոլայի ոսկեղները շաղ եկան սեղանների վրայ, զրնգոցով թափուեցին յատակին: Կիսամութ սրահի ամէն մի անկիւն լուսաւորուեց ոսկեղրամների դեղին փայլով: Եւ հարս ու փեսայ, թոռ ու ծոռ, չորեքքաթ, սողեսող, իրար հրմշտելով, իրարից դրամ խլելով հաւաքում էին ոսկեղները: Դա տեսեց մի քանի վայրկեան միայն: Յանկարծ բոլորի ձեռքում Նիֆոլայի ոսկեղրամները փոխարկուեցին պարզ երեք կոպեկանոցների: Իսկ Հոլոյ մամը՝ թագուհու պէս կանգնած ծիծաղում էր: Ես այդպիսի լիաթոք ծիծաղ չեմ տեսել: Հոլոյ մամը, գինու գաւաթը ձեռքին, ծիծաղում էր:

- Եղ չէ՞ք...

Տասն անկողին ընկաւ: Նա, որ երբեք ոչ ոքից օգնութիւն չէր խնդրել, այժմ գամուկ էր անկողնուն:

- Տա՛ն ջան, ոչինչ, մենք էլ փոքր ենք եղել, դու էլ մեզ ես հոգ տարել,- տակաշորն ու անկողինը փոխելիս մխիթարում էինք ես ու մայրս:

- Զէ, քալա ջան, չէ՛, ապրելս անելորդ է:

Տասն ապրում էր ամօքի ու վերադարձի ծանր ողբերգութիւն:

Մի օր տատս կանչեց ու ինձ մեկնեց Նիֆոլայի տասը ոսկի:

- Ա՛ն, քալա ջան, էս քեզ, սեւ օրերին պէտք կը գայ:

Յետոյ խնդրեց, որ իր արծաթէ գօտին քերեմ:

- Պողոս ջան, էս գօտին էլ կապիր մահեակալիս գլխից, որ բռնուեմ, կարենամ աջ ու ձախ թեփուկ, կամ նստել:

Մի ժամ էինք մօտից հեռացել: Ներս մտանք իր սենեակ ու քար կտրեցինք: Տատս գլուխն անց էր կացրել գօտու մէջ եւ իր ծանր մարմինը անկողնուց դուրս նետել: Ինքն իրեն խեղդել էր: Միայն երեք օր ապրեց ուրիշներին հոգս պատճառելով:

Թաղմանը բոլորն էին եկել - ծով բազմութիւն: Դագաղում նոյնիսկ նա գեղեցիկ էր:

Այսօր տատիս յիշեցի: Ու նա ինձ ժպտաց հեռուններից...

ԸՆԾԱՆՈՒՆԻ ԱՐԼ. ԲԱԲԱՆԱՆԵԱՆ